Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Անձնավորման դրսևորումը Հրանտ Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքում
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Բադալյան Նառա Պետրոսի Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի 094 93 05 21 nara.badalyan196911@gmail.com Մայրենի, հայոց լեզու և գրականություն 4-9 դասարաններ

Ուսումնական հաստատության տվյալներ ● Անվանումը, հասցե ● Հեռախոս ● էլ. հասցե (տնօրենության) ● Web կայքի հասցե	Հայրապետ Հայրապետյանի անվան համար 78 հիմնական դպրոց Ք. Երևան, Բաղրամյան 59 ա 010 22 58 36 school78@schools.am Ք. Երևանի թիվ 78 հիմնական դպրոցն ունի 930 աշակերտ, 36 դասարան:

Բովանդակություն

I. Ներածություն
II. Գրականության ակնարկ
III. Հետազոտության ընթացք
IV. Եզրակացություն
V. Օգտագործված գրականություն
VI. Հավելվածներ

Ներածություն

Նպատակը և հետազոտական հարցը	**Հետազոտական աշխատանքի նպատակն է** Հրանտ Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքում բացահայտել անձնավորման դրսևորումները և ուսումնասիրել դրանք աշակերտների համար հասու դարձնելու միջոցները: **Հետազոտական հարց** – Ինչ մեթոդների միջոցով կարելի է Հրանտ Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքում աշակերտներին հասու դարձնել անձնավորման դրսևորումները:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/ կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	**Լեզվական գրագիտություն և կարողունակություն** – Սովորողները տիրապետում են հայոց լեզվին, գրավոր և բանավոր հաղորդակցվում են մայրենի լեզվով՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների: Նրանք կիրառում են լեզուն՝ որպես ուսումնառության գործիք և հասարակական կյանքին մասնակցության գործիք: Սովորողներն ընդունակ են բանավոր և գրավոր ձևերով ճանաչել, ըմբռնել, արտահայտել և մեկնաբանել տարբեր կարծիքներ: **Սովորել սովորելու կարողունակություն** – Սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում են կյանքի տարբեր իրավիճակներում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են համեմատելու, վերլուծելու, գլխավորը երկրորդականից առանձնացնելու, իրավիճակին քննադատաբար նայելու ունակություն:

Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	Յոթերորդ դասարան, 29 աշակերտ (12 աղջիկ, 17 տղա)
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով և այլն)	Կատարվել է տեսամեթոդական, մասնագիտական գրականության վերլուծություն: Հետազտության նպատակով կիրառվել են դիտման և զրույցի մեթոդներ:
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	2023 թվականի սեպտեմբեր

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	1960-ական թվականներին հայ գրականություն մուտք գործեց գրողների մի սերունդ, որի ներկայացուցիչներից յուրաքանչյուրը ամրագրեց գեղարվեստական մի նոր որակ, թեմատիկ բազմազանություն, հույզերի ու զգացմունքների նոր աշխարհ, ինքնատիպ մտածելակերպ: Նրանց շարքում ինձ համար առանձին իր տեղն ունի Հրանտ Մաթևոսյանը, ում մշակված, լեցուն խոսքը, յուրահատուկ մտածելակերպն ու ոճը ականջիս հարազատ է: Ըստ ավանդական գրականագիտական արժեվորման, Հրանտ Մաթևոսյանի մտածելակերպը ու ոճը անսովոր էր և նորարարական [1, էջ 4]: Արձագանքները սկզբում հակասական և խիստ էին: Հետագայում դրանք ճշգրտվեցին, և բոլորովին այլ, առավել ճշգրիտ տեսանկյունից մեկնաբանեցին մաթևոսյանական արձակը: «Մենք գործ ունենք մի հեղինակի հետ, որը բոլոր տպավորություններով, նյարդերով, մտավոր շարժումով կապված է կյանքի ներքին ընթացքի հետ: Նա կյանքի տարերքն է մտնում իր զենքերով՝ որպես պատկերահան, որպես դիտող, որպես վերլուծող» [2, էջ 5]: 1960-ականներից հայ գրականության մեջ ձևավորվել էր մի նոր ուղղություն՝ «գյուղագրություն» եզրույթով, որի ենթաշերտերում ճյուղավորվել էին հայ գրականության և հասարակության համար կարևոր հարցադրումները՝ գյուղի և գյուղաշխարհի մարդու

խորաքնին ուսումնասիրության հրատապությամբ ու նպատակայնությամբ:

Սա չի նշանակում, թե թեման նորություն էր հայ գրականության մեջ: Պարզապես նոր պետք է լինեին մոտեցումները, խնդրի ներկայացման ձևերը և հանգուցալուծման տարբերակները: Սա կարևոր հարց էր, որի առաջին արձագանքողը դառնում է Հրանտ Մաթևոսյանը: Հ.Մաթևոսյանն իրեն անվերապահորեն համարում է գյուղագիր, հայոց գեղջկական տարրի տարեգիր, իր օրերի հայ գյուղի հոգսերի թարգման, գեղագիտական աշխարհի յուրահատուկ ապագայի մեկնաբան: Անտարակույս, գրողի արձակը նոր երևույթ է իր բովանդակությամբ: Իսկ այն կարևոր հանգամանքը, որ մաթևոսյանական մտքի ու գեղարվեստական ճաշակի վրա ազդեցություն են ունեցել բազում դասականների մտավոր հայացքները, ուղղակի անառարկելի է: Հ.Մաթևոսյանն Ա.Բակունցին և Հ.Մնձուրուն գնահա-տելիս հաճախ է հիշատակում մթնաձորյան եզերքի և կապույտ Արմտանիի տարեգիր լինելու հանգամանքը, բայց ամենից առաջ ռեալիստական ճշմարտության խորությունը, որով տարեգիրը դառնում է գեղարվեստա-գետ: Իրեն էլ համարում է գյուղագիրների նույն տոհմից, բայց ոչ դարավերջի գյուղա-գիրների, որոնց ստեղծագործությունների մեջ տիրապետողը սովորական կյանքի արտացո-լումն է կամ կորցրած գյուղի հուշը և մորմոքը:

Հ.Մաթևոսյանի ստեղծագործական ակունքները ձգվում են պատմության խորքերը:

Հատկանշական է այն հանգամանքը, որ գրողն իր հաջողությունների գրավականը տեսնում է միայն ու միայն գյուղի պարզության ու խոհեմության, աշխարհագրական դիրքի ու բնության երևույթների նկարագրության մեջ: Մաթևոսյանը գտնում է, որ «...Ծմակուտի միջոցով կարելի է արտահայտել մեր բարդ ժամանակների գրեթե բոլոր համամարդկային պրոբլեմները»: Բացի Հ.Թումանյանից, Ա.Բակունցից, Հ.Մնձուրուց, գրողն ընդունում է, որ իր ստեղծագործությունը սերտորեն կապված է ժողովրդական բանահյուսության, հատկապես «Սասնա ծռեր» էպոսի հետ, որից նա քաղում է բանահյուսական լիցքը: Հ. Մաթևոսյանը հայոց մշակույթի մեծագույն բանահյուսական հուշարձանը համարում է «Սասունցի Դավիթ» վիպերգը՝ իբրև առաջին գիրք, և մեծագույն հայ գրող Հ.Թումանյանին: Գրողի համար սա գեղարվեստական դավանանք է: Նա արժևորում է իր միջավայրի մարդկանց զրույցները, պատմությունները: Հ.Մաթևոսյանը լսել է այդ ասացողներին, որոնց թվում է նաև իր մայրը: Պատահական չէ Մաթևոսյանի մի խոստովանությունը, թե իր պատմելաձևը գալիս է մորից: Նրա խոսքի ու պատմումի հյուսվածքում ընդգծվում է ժողովրդական խոսքի կնիքը: Այս թեման այնքան կարևոր է Մաթևոսյանի համար, որ նա պարբերաբար հանդես է եկել և՛ առանձին գիտական հոդ-

վածներով, և՛ հարցազրույցներով, և՛ գիտական թեմաների շուրջ բանավեճերով: Հարցազրույցներից մեկում, այն հարցին, թե որն է բանահյուսությունից մինչև այսօր հայ գրականության կարևոր առանցքային գիծը, որի վրա զարգացել է գրական դաշտը, նա պատասխանում է. «Դեմոկրատիզմը Էպոսից սկսած քո թագավորը Սասունցի Դավիթն է՝ օժտված գեղջկական մտածողությամբ: Ի սկզբանե դեմոկրատ գրականություն է» [9]: Խորհրդային գյուղագրին հաճախ են ասել, որ նա կարող է դառնալ հայոց ազգի լեգենդը և պաշտպանը, որովհետև անձնուրաց հայորդին նվիրումով ու հաղթական մտքերով գնում էր առաջ ու բոլորին ապացուցում, որ իրենց բազկի ու մտքի շնորհիվ միշտ կմնան կանգուն ու անկոտրում: «Մաթևոսյանը հաղթանակ տարավ բարոյականության, խղճի, ողջամտության ու գիտակցության անհաղթ զենքով» [8, էջ 3]: Գրողի ուշադրության կենտրոնում են նաև այնպիսի հարցադրումներ, ինչպիսիք են ընթերցող-գրող զուգահեռը, գրականության դերը, նշանակությունը առաջնահերթ խնդիրները: Նմանատիպ հարցերը մտահոգել են արձակագրին մինչև կյանքի վերջ:

«Ամեն ժամանակ ունի իր գրականությունը, որը բոլոր նախորդ շրջանների գրականությունների նախընթաց զարգացման շարունակությունն է: Ու բոլոր ժամանակների գրականությունն ունի երբեք չհնացող նպատակ՝ խոսել ընթերցողի լեզվով ու նրա մասին» [9, էջ 3]:

Հ.Մաթևոսյանի արձակն իմաստավորող հրապարակումներում գրողը ներկայացվում է որպես ժամանակի առաջադեմ մտածողության տեր անձնավորություն: Հետանկախության տարիներին հայ գրականությունն ու ժողովուրդը վերելք են ապրում, հասնում նոր բարձունքի: Հեշտ չէր գրականության ուղին 1991 թ-ից մինչև 2000 թ. և դրանից հետո: Ժամանակն առաջարկում է նոր գրականության խնդիրներ՝ նոր բովանդակությամբ ու գաղափարներով, նոր կերպարների թարմությամբ: Այդ ընդհանուր փնտրտուքի մեջ առանձնանում է Հ.Մաթևոսյանի ստեղծագործությունը, որ դառնում է ակունք հետագա զարգացումների համար: Նրա աշխարհայացքը, գաղափարներն ու մտքերը, հարուստ ներաշխարհը դառնում են ուսումնասիրման թեմա: Ուշագրավ ու հետաքրքրական է հատկապես այն հանգամանքը, որ յուրաքանչյուր դիտարկում նորովի ու գեղարվեստական կողմից է նկարագրում այս ժամանակա-հատվածը: Ժամանակահատված, որ պահան-ջում էր ու մինչև այժմ էլ պահանջում է խելք ու միտք, զանազանելու ու երկխոսելու կարո-ղություն: Սա է գրականության ճանապարհը: «Հրանտ Մաթևոսյանի մասին գրելը բարդ է: Համարյա անհնարին: Ցանկացած գրական տող թերի ու կիսատ է մնում: Նույնն է, որ նրա հետ փորձես հարցազրույց անցկացնել: Չի ստացվի: Նրա գրականությունը ու մտքերը ըմբռնելը մի

փոքր անհեթեթ է, սխալ կլինի ասել, որ բոլորը հասու են» [10, էջ 6]:

Հ.Մաթևոսյանն, իբրև իրապաշտ գրող, որոնում, փնտրում և գտնում է ճշմարտությունը: Որոնման այդ ճանապարհին ստեղծվում են գեղարվեստական յուրօրինակ պատկերներ, համապատասխան հոգեվիճակներ ու իրավիճակներ, դրանց բնորոշ բազմաթիվ իրական և համոզիչ գրական կերպարներ: Ստեղծագործությունների հիմնաքար են դառնում դիպուկ պատկերները, գյուղական կյանքի իրական նկարագրությունը, նահապետական հայացքները և հայկական ավանդույթները: Նա առաջադրում է հարցադրումներ, ստեղծում հոգեբանական բարդ իրավիճակներ, որոնք բուռն քննարկումների թեմա են դառնում: Նշենք, որ այդ քննարկումները, կարծիքների խաչաձևումները գրողի ստեղծագործական մտքի վրա ունենում են դրական ու բեղմնավոր ազդեցություն: «Իր մտածողությամբ Հ.Մաթևոսյանը հայ գրող է՝ հարազատ իր բնաշխարհին, այդ միջավայրի մարդկանց ու նրանց հոգեբանությանը, բարքերին ու կենցաղին: Այս ամենի յուրաքանչյուր մանրուքի նկարագրություն չի վրիպում տաղանդավոր գրողի տեսողությունից» [11, էջ 3]:

Լեզվաոճական առանձնահատկությունները մաթևոսյանական երկխոսությունների անմոռանալի արվեստը դարձնում են նրան յուրահատուկ բոլոր ժամանակների համար: Մաթևոսյանը բացի գրականության շուրջ տեսա-

կան բանաձևումներից, ուշադրություն է դարձնում գրական երկի լեզվի առանձնահատկություններին: Երբ գրողը խոսում է լեզվից, նա նկատի ունի ժողովրդախոսակցական լեզվի տարերքն՝ իր բնական, ճկուն, դիպուկ կենդանի արտահայտչականությամբ:

Հ.Մաթևոսյանին համարել են բարբառագիր հեղինակ, որն, ըստ էության, թյուրիմացության հետևանք է, թեև նա հաճախ է դիմում արտահայտչական բարբառային ձևերին: Հայտնի է, որ ամեն մի ժողովրդի լեզու ունի կենդանի և մեռած բառեր, խոսք-արտահայտություններ: Մաթևոսյանը, դիմելով բարբառին, խորապես գիտակցում է, որ դա գրականությունը սնող կենդանի լիցք է, որ բարբառի ճշգրիտ, ոչ համատարած օգտագործումը կանխում է գրականության լեզվի մեջ անարյուն, հալումաշ եղած, մի խոսքով՝ մեռյալ լեզվի թափանցումը: Նա գիտի նաև, որ լեզուն ոչ թե առանձին մարդկանց քմահաճույքն է, այլ ժողովրդի զավակն է, հարազատը և ոչ օտարածինը, որ այս կամ այն բարբառի լեզվական նստվածքները ձևավորվել են՝ արտահայտելու ժողովրդի էությունը, աշխարհազգացողության չափն ու աստիճանը: Սրանով է բացատրվում նրա գրվածքների կռիվը հանուն բառի, հանուն կենդանի, բնական խոսքի, ընդդեմ անարտահայտիչ, ծույլ հոլովումների, ընդդեմ լեզվական համահարթմանը: Քանի որ յուրաքանչյուր անհատ տարբերվում է իր մտածողությամբ, աշխարհըմբըռ-

նումով, իրականության մեջ եղած առարկաների, երևույթների ընկալմամբ ու գնահատմամբ, բնականաբար, նա պետք է տարբերվի նաև իր ունեցած լեզվական-քերականական միջոցով ու պաշարով, մտքի կառուցվածքով, և խոսքն արտահայտելու եղանակով:

Կերպարների խոսքը ոճավորելիս Հ.Մաթեվոսյանը ցուցաբերում է համապատասխան վարպետություն, լեզվաոճական միջոցների ընտրության հմտություն, յուրաքանչյուրի դատողությունները, բառն ու արտահայտությունը համապատասխանում են կերպարի էությանն ու մտածելակերպին, հաճախ նաև տվյալ պահի հոգեվիճակին: Չնայած կերպարի խոսքը վերջին հաշվով կերտվում է նույն հեղինակի կողմից, միևնույն համազգային լեզվի ընդհանուր միջոցներով, բայց կարևորն այն է, թե որքանով է հաջողվում օգտագործել լեզվի արտահայտչական տարբեր միջոցներն ու երանգները միևնույն երկում տարբեր հերոսների խոսքը համոզիչ ու տիպական դարձնելու նպատակով: Միանշանակ կերպարների ոճավորումը բարդ գործընթաց է, որի հենքը կազմում է խելացիությունը և վարպետությունը: Մաթևոսյանն իր հերոսներին ներկայացնում է առանց որևէ գունազարդման: Բնության տարերքների դեմ մաքառող, աշխատասեր, ստեղծագործ այդ մարդիկ պարզ են ու անմիջական, ներկայանում են անկեղծ մտածողությամբ ու դատողություններով, բառ ու բանով, որ ավելի գեղեցիկ ու արտահայտիչ

են հնչում նրանց խոսքում: «Հր.Մաթևոսյանի խոսքը սեղմ է, բայց բովանդակալից ու տարողունակ: Նրա հարուստ խոսքին բնորոշ են լեզվական տարբեր կառույցներն ու եղանակները» [13, էջ 321]: Հ.Մաթևոսյանն իսկապես երկխոսության չգերազանցված վարպետ է ժամանակակակից հայ արձակագիրների հոծ շարքում: Երկխոսությունը նրա համար և' գործողություն է, և' բնավորություն: Ահա այս ճանապարհով է արձակագիրը նվաճում գեղարվեստական երկի գլխավոր խնդիրը՝ մարդկային բազմաշերտ բնավորության կերտում, փոխհարաբերությունների խորքային ուսումնասիրում:

Աշխույժ քննարկման նյութ է գրողի հոգեբանական բացահայտումների շրջանակը: Հ.Մաթևոսյանը վառ ու կայացած անհատականություն է՝ երազանքներով և մտորումներով պարուրված: Հոգեբանության և բնավորության ձևավորման գործում առաջնային, որոշիչ դերը կեցությունն է. Մաթևոսյանն էլ կեցությունից գնում է անհատի հոգեբանության, ներաշխարհի բացահայտումներ, ընդգրկում է անձի սոցիալական հոգեբանությունը կեցության խոսքային ըմբռնմամբ:

Գաղափարական հիմնահարցերը, ստեղծագործական որոշակի միտումն այս դեպքում չեն բացառում լայն ու բազմակողմանի ընդգրկում, կյանքի խորքային պեղումներ: Անհատական յուրաքանչյուր դրսևորման մեջ, հոգեբանական ամեն մի տեղաշարժում ակն-

հայտ է կեցության, սոցիալական կյանքի առանձնահատկությունների կնիքը: Խոսքն անհատի հոգեբանական ըմբռնման մասին է, որի հիմքում արտաքին աշխարհի մեծ ու փոքր ազդակների և նրանց հոգեբանական բարդ անրադարձումների անսխալ ճանաչումն է: Գնահատման ամենահաստատուն միավորն աշխատանքն է՝ որպես կենսաձև: Մաթևոս-յանը չի թանձրացնում գույները. Իսկապես, ծանր է աշխատանքը, դժվար է առօրյան, սակայն դա արմատավորված պահանջ է, կենսաձև:

Անհատական հոգեկերտվածքի ամենաբա-ցահայտ ու անմիջական դրսևորումների ար-տացոլման մեջ անգամ արձակագրի տեսա-դաշտից չեն վրիպում ներքին այն խնդիրները, որոնք թեև արտաքին մակերևույթ չեն դուրս գալիս, որոշակիորեն չեն արտահայտվում, այնուամենայնիվ զգալի են:

Կարդալիս՝ բառի բուն, կարդալ-մտածել իմաստով, երբ գրողի մտքերը կարդալու արդյունքում ծնվում են ընթերցողի սեփական մըտքերն ու խոհերը, թերևս տեղի է ունենում մի բարդ միջնորդավորված գործընթաց գրողի և ընթերցողի միջև: Պետք է օգնել սովորողին՝ ճիշտ կարդալ ընկալելու, հասկանալու համար գեղարվեստական ստեղծագործությունն իր ամբողջ հմայքով: Գաղտնիք չէ, թե որքան բազմազան են գրական երկերն իրենց լեզվա-ոճական, տեսակային, կառուցվածքային, բո-վանդակային-գաղափարական և այլ կողմե-

	րով: Յուրաքանչյուր գրող իրեն հատուկ գրելաոճ ունի: Փոքր ծավալի մեջ դնել մեծ ասելիք կամ, հակառակ, բնագրին իշխող ենթաբնագիր, հագեցած պատկերային համակարգ, հաճախ հանդիպող կամ սակավադեպ հերոսներ և այլն, որոշ գրողներ իրենց ստեղծագործություններում ներկայանում են իբրև հեղինակ, պատմող, շարադրող: Կարդացողը ընթերցանության արդյունքում է ներքաշվում պատմվածի, գրվածի իմաստավորման ընթացքի մեջ: Տպավորությունները, հետևությունները, դատողություններն անմիջականորեն կախված են ընթերցանությունից որոշակի էմոցիաներով լիցքավորելուց՝ դրական կամ բացասական, տհաճ կամ հաճելի և այլն, կամ երկուսը միասին): Մաթևոսյանի երկերը մեկ ընթերցանությամբ չընկալվող գրական այն բարդ երևույթներից են որոնք ուշադրության կենտրոնացում և մտքի լարում են պահանջում: Նրա երկերը կարդալու համար ընթերցողին անհրաժեշտ են մի քանի հատուկ պայմաններ. • գյուղական միջավայրում ապրած լինել կամ մասնակի ծանոթ լինել հայկական գյուղի կենսակերպին, • ընթերցողի որոշակիորեն ձևավորված աշխարհայացք (ինքնագիտակցում, ինքնաճանաչում), • ունենալ գեղարվեստական մտածողություն և Մաթևոսյանի լեզվամտածողությանը եթե ոչ նման, ապա գոնե մոտ լեզ-

վամտածողություն «...յուրովի համահեղինակ դառնալով' վեր հանել այն, ինչը հեղինակը թողել է հենց նրանց կամքին ու կարողությանը...» [3, էջ 78],

- համախոհ ընթերցողների մի շրջան, որտեղ հնարավոր լինի ժամանակ առ ժամանակ կարդացածը քննարկել,
- ունենալ հումորի զգացում:

Այս ամենի հետ մեկտեղ անհրաժեշտ է մի կարևոր պայման ևս' որ ընթերցողն օժտված լինի «մարդասեր հոգեբանի հատկություններով»: Ինչպես նշվեց Մաթևոսյանի երկերը մեկ ընթերցմամբ չեն ընկալվում: Ամենակարևոր պատճառը թերևս գրողի բարդ լեվամաածոդությունն է՝ որն իր արտահայտությունն է գտնում հերոսների խոսքում, ապրումներում, բնավորության դրսևորումների, վարքի մեջ. «Ամենից անհրաժեշտ բառերը պիտի գրես: Տարածության մեջ քեզ փակիր, քիչ ասա, ժամանակին լռիր, պաուզայի զգացողություն ունեցիր, կյանքի հիմքերի, գեղարվեստական հենքի վրա անսահմանափակ ծավալվող մտածողություն և զուսպ, ծայրահեղորեն խիստ մշակված լեզու (գրավոր խոսք) [9]: Այս բարդ հակադրամիասնությունն առաջ է բերում հոգեբանական իրավիճակների լարված անցում: Մտահոգությունն առ հայրենիք, առ մարդ, իրենց վրա կրելով պատմողի շունչը, փոխանցվում է ընթերցողին և կաշկանդում արագ ընկալման հնարավորությունը: Առաջանում է վերընթերցման անհրա-

ժեշտություն: Վերընթերցման ժամանակ են հայտնաբերվում միջադեպային մանրամասները, խաղացկուն բնապատկերները, որոնք պարպելով պատումի լարվածությունը, նոր թարմ ռիթմ են հաղորդում տեքստին: Իդեալ-կերպարը առաջնորդում է' ապլով մարդկային որոյական նորանոր արժեքների բացահայտման հնարավորություն: Ընթերցողը հայտնաբերում է հայ մարդուն, հայկական կյանքի շունչը, հայտնաբերում ինքն իրեն, ասել է թե մարդուն: Եվ ընթերցողը փակում է գիրքը՝ միանշանակ զգալով գեղարվեստի ընկալման հաճույք: Այսօր արդեն «Մեր վազքը» ժողովածուն, «Հացը» և «Կանաչ դաշտը» պատմվածքները (միջին դպրոց), «Օգոսաոս», «Ծառերը», «Տերը» ժողովածուները, «Աշնան արև» վիպակը (ավագ դպրոց) ուսուցանվում են հանրակրթական դպրոցներում:

Ինչպես ցանկացած գրական երկի, այնպես էլ նշված գործերի ուսումնասիրումը լուրջ, հետևողական աշխատանք են պահանջում թե' ուսուցչից, թե' աշակերտից: Մաթևոսյանի երկերի ուսումնասիրման ժամանակ առավել կարևոր է ուսուցչի դերը (ուսուցչի ընթերցում): Ուսուցչի կողմից ճիշտ ընթերցված երկը դյուրին է դարձնում նյութի ընկալումը: Եվ աշակերտները գործուն մասնակցություն են ցուցարերում նյութի վերլուծության և մեկնաբանման ժամանակ: Միջին դպրոցի սովորողները գտնվում են անցումային տարիքում և երբեմն անտարբեր և անփույթ վերաբերմունք

	են ցուցարերում անցնելիք նյութի նկատմամբ: Սակայն միևնույն ժամանակ նրանք օժտված են բարձր հուզականությամբ և ղյուրըմբռնողականությամբ և հենց այդ տարիքում էլ լիովին պատրաստ են բարոյապես և հոգեպես ճիշտ կրթվելու: «Գրական երկի ընթերցումը մեծապես նպաստում է նրանում արտահայտված հույզերի ու մտքերի ըմբռնմանը, աշակերտների մեջ առաջացնում է ազնիվ ձգտումներ ու դրսևորում և նպատակաուղղում գեղեցիկի նկատմամբ նրանց հակումներն ու ձիրքերը... Նա հոկում, մշակում, ավելի արտահայտիչ ու իմաստալից է դարձնում նրանց խոսքը» [12, էջ 26]:
Հետազոտության ընթացքը	Հետազոտությանը մասնակցել են ք. Երևանի թիվ 78 հիմնական դպրոցի յոթերորդ դասարանի աշակերտները: Մեր հետազոտական աշխատանքի նպատակն է Հ.Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքում բացահայտել անձնավորման դրսևորումները և ուսումնասիրել դրանք աշակերտների համար հասու դարձնելու միջոցները: Հետազոտության նպատակով կիրառվել են դիտման, զրույցի մեթոդներ՝ սովորողների կարողունակությունների միջոցով Հ.Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքում անձնավորման դրսևորումները բացահայտելու և աշակերտներին հասու դարձնելու միջոցները ուսումնասիրելու համար: Նպատակահարմար

ենք գտել բերված մեթոդների կիրառումը, քանզի դրանք համապատասխանում են մեր կողմից առաջադրված խնդիրների լուծմանը:

«Կանաչ դաշտը» պատմվածքը հագեցած է քնարական շնչով: Բնության գեղեցիկ պատկերները հաջորդում են միմյանց ընթերցումը անհրաժեշտ է սկսել մեղմ, հանգիստ տոնով, առանց կտրուկ ելևէջումների, ասես բացատրում ես, թե ինչ է կայծակը, ինչ հետևանքներ է թողնում, ինչ վարք ունեն դաշտում կապած մայր ձին և միամսյա կյանք ունեցող քուռակը և այլն: Այնուհետև, սկսած այն հատվածից, երբ մայր ձին զգում է գայլի ներկայությունը բաց դաշտում՝ «Օդում այդ վտանգից ձայն չկար, հովտում այդ վտանգը չէր երևում, քամու մեջ այդ վտանգի հոտը չկար, բայց ձին չէր կարողանում արածել»: Լարված տոն հաղորդելով ձայնին, առանց դադարների ընթերցումը շարունակել մինչև գայլի փախուստը: Սկսած այդ հատվածից, տոնը դարձնել թախծոտ և տխուր: Մաթևոսյանի երկերը, չնայած մտքի ելևէջումներին, բառային բարդ ու բազմերանգ խաղերին, ընթերցվում են միատոն, թախծոտ հնչերանգով, առանց կտրուկ ելևէջումների, շատ են սակայն տրամաբանական դադարները:

Պատմվածքների ուսուցման ժամանակ կարելի է կիրառել ուսուցման անհատական և զույգերով տեսակները՝ նկատի ունենալով նյութի համեմատաբար փոքր ծավալը: Բացի անհատական և զույգերով աշխատանքից,

խմբային գործունեությունը ևս դրականորեն կնպաստի պատմվածքի արագ և հեշտ յուրացմանը, նաև ժամանակակից հայոց լեզվի ուսուցման և հայերեն մտածողության ձևավորման անփոխարինելի միջոց են:

Գեղարվեստական երկերի գեղեցիկ և ճիշտ ընթերցումը աշակերտների մեջ զարգացնում է լսելու հմտություն, նրանց միտքը ուղղում է դեպի մարդկային բարձր արժեքները, օգնում է նկատել և գնահատել այդ արժեքները:

Հ.Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքը յոթերորդ դասարանում ուսուցանում եմ խմբային աշխատանքի միջոցով: Դասարանը բաժանում եմ չորս խմբի:

Խմբային առաջադրանք 1. Հանձնարարում եմ խմբային աշխատանք: Խնդրում եմ սովորողներին, որպեսզի նրանք գիտելիքի կիրառմամբ կատարեն բառային աշխատանք Հ.Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքի շուրջ, խմբով քննարկեն և լրացնեն աղյուսակը: Բոլոր խմբերին տրվում է նույն առաջադրանքը: Սահմանում եմ ժամանակը մինչև տաս րոպե: Վերջացնելուց հետո խմբերը ներկայացնում են աղյուսակում ընդգրկված բառերի բացատրության իրենց խմբային պատասխանը:

Խմբային առաջադրանք 2. Քննարկումն ավարտելուց հետո խնդրում եմ խմբերին կատարել նոր առաջադրանք: Այս անգամ առաջադրանքները տարբեր են:

ԽՈՒՄԲ I. Առաջադրանքը վերաբերում է պատմվածքի կերպարներին: Ուշադիր կարդացեք պատմվածքը և լրացրեք աղյուսակը: Պատմվածքից ընտրեք որոշակի հատվածներ, լրացրեք համապատասխան սյունակը:

ԽՈՒՄԲ II. Պատմվածքի գործողությունների հաջորդական ընթացքը: Ուշադի՛ր կարդացեք պատմվածքը և հաջորդաբար խմբով նշե՛ք պատմվածքի դեպքերի ընթացքն ըստ հարցերի:

ԽՈՒՄԲ III. Կանաչ դաշտի գույները և բույրերը: Ուշադի՛ր կարդացեք պատմվածքը և պատմվածքից գտե՛ք գույն և հոտ նշանակող բառերը և բառակապակցությունները, դո՛ւրս գրեք սյունակներում, իսկ դիմացի սյունակում էլ նշե՛ք խմբի կարծիքը, թե ինչ նշանակություն ունեն գույնը և հոտը պատմվածքում:

ԽՈՒՄԲ IV. Պատմվածքի հերոսների մտորումները: Պատկերացրեք, որ պատմվածքի կենդանիները կարողանում են մտածել և խոսել: Սյունակներում գրեք, թե ինչ կարող էին մտածել կարմիր պառավ ձին, քուռակը, գայլը, նրա ձագերը՝ գայլուկները:

Առաջադրանքի նպատակն է «Կանաչ դաշտը» պատմվածքում բացահայտել անձնավորման դրսևորումները, ճանաչել, հասկանալ և աշխատել դրանց հետ: Աշակերտների համար հետաքրքիր է խմբային աշխատանքը, որի քննարկումների ժամանակ ուշադրության կենտրոնում են ժայռը, մասրենու թուփը,

	կարմիր պառավ ձին, քուռակը, գայլը, նրա ձագերը՝ գայլուկները: Այս ամբողջ ընթացքում սովորողները խոսում են, գտնում, ընդգծում անձնավորման տարբեր դրսևորումներ: Աշակերտներին տրվող հրահանգները հստակ ձևակերպված են, կապված իրար և բխում են նպատակներից, հնարավորություն են տալիս հասնելու վերջնարդյունքին՝ ցույց են տալիս դեպքերի հաջորդական ընթացքը և բացահայտում կարմիր ձիու՝ տառապող և իրեն զավակի համար զոհաբերող մոր գրական կերպարի զարգացումը: Խմբային աշխատանքի ներկայացման ընթացքում սովորողները գնահատում են տեքստի ոճը, բառապաշարը, արժևորում պատմվածքի կառուցվածքային առանձնահատկությունները, անդրադառնում ձիու, գայլի, քուռակի կերպարներին, գործողություններին, շեշտում անձնավորման պատկերների գեղեցկությունը, արժեքային, խորհրդանշական իմաստը և այլն: ինչը մեկ անգամ ևս շեշտվում է անդրադարձի հարցերով: Դասի պլանը և խմբային աշխատանք 1-ի և 2-ի առաջադրանքները ներկայացված են հավելվածներում:

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Ուսումնասիրելով Հ.Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքում ժայռի, մասրենու թփի, կաղնու, քուռակի, կարմիր ձիու, գայլի անձնավորումները բացահայտ և աշակերտի համար ակնհայտ դարձնելու միջոցները, կատարել եմ հետևյալ եզրակացությունները. 1. գեղարվեստական ստեղծագործության մեջ անձնավորումը բացահայտելու համար հարմար միջոց է քննարկումներով ուղեկցվող խմբային աշխատանքը, 2. խմբային աշխատանքի համար պետք է ունենալ մանրակրկիտ մշակված, հստակ նպատակային առաջադրանքներ, 3. անձնավորումների բացահայտումները նպաստում են գրական գեղարվեստական ստեղծագործության ոճի, բառապաշարի, ասելիքի, գեղագիտական կողմի ընկալման արդյունավետությանը: Վերլուծելով ուսումնասիրության ստացված տվյալները, կարելի է եզրակացնել, որ գրական գեղարվեստական ստեղծագործության մեջ անձնավորումների ընկալումը օգնում է սովորողին հասկանալ, զգալ ստեղծագործության ոճը, ասելիքը, զարգացնել գեղագիտական ճաշակ, մշակել բարոյական, հոգևոր արժեքներ և վերաբերմունք:
Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ

1. Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգ: Հավելված N 1. ՀՀ կառավարության 2021 թ. փետրվարի 4-ի N136-Ն որոշման:
2. Ալեքսանյան Թ. Հրանտ Մաթևոսյանի «Հացը» պատմվածքի ուսուցումը: Մաթևոսյանական ընթերցումներ. Եր.: ՀՈՀ, 2017 թ. - 288 էջ:
3. Կարապետյան Ա., Հ. Մաթևոսյանի գրական աշխարհը, Նոր-դար, Ե., 1987, թ. 9, էջ 4:
4. Եզեկյան Լ, Հ. Մաթևոսյանի արձակի խոսքարվեստի մի քանի հարցեր, Ե., 1986, էջ 3-6:
5. Բագրատյան Ն., Հրանտ Մաթևոսյանի հրապարակախոսությունը, Ե., 2009, էջ 78:
6. Մանուկյան Է., Գրականության խնդիրը, Ավանգարդ, Ե., 1983, 4 մայիսի, էջ 3:
7. Եզեկյան Լ, Հ. Մաթևոսյանի արձակի խոսքարվեստի մի քանի հարցեր, Ե., 1986, էջ 96:
8. Գրիգորյան Վ., Հրանտ Մաթևոսյան, Ե., 1989, էջ 16:
9. Մաթևոսյան Հ., Հայացք հայոց ապագային, Ժամանակ, Ե., 1984, թ. 10, 25 մարտի, էջ 3:

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր • Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) • Նկարներ • Արդյունքներ	

Հավելված 1.

ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ 2022-23 ուստարի

Ամսաթիվ		
Դասարան	7-րդ	
Ուսուցիչ (ներ)	Բաղալյան Նառա	
Առարկա	Գրականություն	
Թեման (օրվա կամ շաբաթվա)	Հրանտ Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքը	
Հիմնական հասկացություն	Անձնավորման միջոցներ, պատմվածք	
Ենթահասկացություն	Բնության անկենդան օբյեկտների, երևույթների, տարրերի անձնավորում, շնչավոր օբյեկտների, կենդանիների անձնավորում	
Խաչվող կամ ընդհանրական հասկացություն	**Ժամանակ և տարածություն** – գրողի կենսագրությունը, տեքստում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը, **Պատճառ և հետևանք** – դիպաշարի զարգացման հաջորդական աստիճանները, **Անհատական և մշակութային արժեհամակարգ** – գրողի օգտագործած բառապաշարը, գեղարվեստական խոսքի պատկերավորման միջոցները, ստեղծագործության գաղափարը:	
Միջառարկայական կապեր	**Հայոց լեզու** – Բառապաշար, խոսքային կաղապար և մտածողություն: **Պատմություն** – Պատմական ակնարկ գրողի կենսագրությանն ու ստեղծագործությանն առնչվող ժամանակաշրջանի մասին: **Արվեստ -** ստեղծագործությանն առնչվող պատկերներ, նկարազարդումներ, մեղեդի և այլն:	
Ձևավորվող կարողունակություն	Լեզվական գրագիտություն և կարողունակություն, սովորել սովորելու և մշակութային կարողունակություն	
Նպատակները	1. Ամրապնդել և զարգացնել պատկերացում Հ.Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքում պատկերված մարդ -հասարակություն-բնություն փոխհարաբերությունների մասին: 2. Բացահայտել Հ.Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքում կիրառված անձնավորման միջոցները: 3. Մատնանշի պատկերավորման այն միջոցները, որոնք ընթերցողին հույզ և գաղափար են փոխանցում: 4. Հ.Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքից ձեռքբերած գիտելիքները և կարողությունները կզարգացնեն սովորողների մոտ արդարամտություն, լայնախոհություն, համարձակություն, տոկունություն, մայր-երեխա հուզական կապի ամրապնդում, հավասարակշռվածություն:	**Նշումներ** (ուսուցիչները նշումներ են կատարում նախօրոք պլանավորված որևէ քայլի փոփոխության, նոր գաղափարի ի հայտ գալու մասին)
Վերջնարդյունք(ներ)	**Ցույց տա** դեպքերի հաջորդական ընթացքը և բացահայտի գրական կերպարի զարգացումը: **Գնահատի** տեքստի ոճը, բառապաշարը, կառուցվածքային առանձնահատկությունները, կերպարներին և նրանց գործողությունները:	
Անհրաժեշտ նյութեր	Դասագիրք, տեքստ, խմբային առաջադրանքներով թերթիկներ, աղյուսակներ և այլն):	

Առաջարկվող գործունեության ձևեր և մեթոդներ	Դուրս գրել անծանոթ բառերը, բացատրել, ընդգծել գեղարվեստական խոսքի պատկերավորման միջոցները: Դուրս գրել յուրաքանչյուր կերպարին բնութագրող հատվածները: Բանավոր և գրավոր հաղորդել դեպքերի ընթացքը որպես մասնակից՝ քուռակ, ձի, գայլ:	
Ժամանակ	Ֆրոնտալ հարցման միջոցով վերհիշում ենք թեմայի կարևոր հատվածները: Սովորողներին բաժանում ենք չորս խմբի: Հանձնարարում եմ խմբային աշխատանք: Խնդրում եմ սովորողներին, որպեսզի նրանք իրենց գիտելիքի կիրառմամբ կատարեն բառային աշխատանք Հ.Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքի շուրջ, խմբով քննարկեն և լրացնեն աղյուսակը: Բոլոր խմբերին տրվում է նույն առաջադրանքը: Սահմանում եմ ժամանակը մինչև տաս րոպե: Վերջացնելուց հետո խմբերը ներկայացնում են աղյուսակում ընդգրկված բառերի բացատրության իրենց խմբային պատասխանը: Քննարկումն ավարտելուց հետո խնդրում եմ խմբերին կատարել նոր առաջադրանք: Այս անգամ առաջադրանքները տարբեր են: **I.** Առաջադրանքը վերաբերում է պատմվածքի կերպարնե-րին: Ուշադիր կարդացեք պատմվածքը և լրացրեք աղյու-սակը: Պատմվածքից ընտրեք որոշակի հատվածներ, լրաց-րեք համապատասխան սյունակը: **II.** Պատմվածքի գործողությունների հաջորդական ընթաց-քը: Ուշադի՛ր կարդացեք պատմվածքը և հաջորդաբար նշե՛ք պատմվածքի դեպքերի ընթացքն ըստ հարցերի: **III. Կ**անաչ դաշտի գույները և բույրերը: Ուշադի՛ր կարդացեք պատմվածքը և պատմվածքից գտե՛ք *գույն* և *հոտ* նշանակող բառերը և բառակապակցությունները, դո՛ւրս գրեք սյունակներում, իսկ դրանց դիմացի սյունակում էլ նշե՛ք խմբի կարծիքը, թե ինչ նշանակություն ունեն դրանք պատմվածքում: **IV.** Պատմվածքի հերոսների մտորումները: Պատկերացրեք, որ պատմվածքի կենդանիները կարողանում են մտածել և խոսել: Սյունակներում գրեք, թե ինչ կարող էին մտածել *կարմիր պառավ ձին, քուռակը, գայլը, նրա ձագերը՝ գայլուկները*:	
10 րոպե	1. Յուրացման կամ ուսումնասիրվող առաջադրանքի ստուգում. Անհասկանալի հարցերի պարզաբանում:	
5 րոպե	1. **Խթանում,** նոր նյութի մուտք. Նշել կիրառվող մեթոդը: **Խթանման հարց** – Գտնել գլխավոր հերոսին Հ.Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքում:	
10 րոպե	5 **Ամրապնդում**. Նոր նյութի ուսուցում կամ միասին ուսումնասիրում (այս փուլի համար կիրառվող մեթոդներից մեկը նշել): Ներկայացնում եմ «Անձնավորման միջոցներ» հիմնական հասկացությունը,	

	բերում օրինակներ: Խմբային աշխատանքի միջոցով փորձում ենք Հ.Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքում գտնել անձնավորման միջոցները: Խնդրում եմ խմբերին կատարել առաջադրանք 1, 2:	
15 րոպե	6 **Կշռադատում**. Նոր նյութի ամրապնդում. Լրացնել աղյուսակները, կատարել խմբային առաջադրանքները (կիրառել այն մեթոդները, որոնք նախատեսվում են այս փուլի համար): «Խմբային աշխատանք» մեթոդ: Հիմնականում խմբերի ինքնուրույն աշխատանքն է՝ ուսուցչի ուղղորդումով:	*Աշակերտներին տրվող հրահանգները հստակ ձևակերպել, հիշել, որ դրանք կապված պիտի լինեն և պիտի բխեն նպատակներից և հնարավորություն տան հասնելու վերջնարդյունքին:*
5 րոպե	4. **Անդրադարձ –** Ի՞նչ նոր բան իմացար, ի՞նչը լավ արեցիր այսօր: Յուրացման կամ տնային առաջադրանք:	Կիրառել անդրադարձի հնարներ:

Հավելված 2.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԹԵՄԱՆ՝ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, «ԿԱՆԱՉ ԴԱՇՏԸ» ՊԱՏՄՎԱԾՔԸ

Կազմեց Թամար Ալեքսանյանը

Բառային աշխատանք պատմվածքի շուրջ

Սիրելի աշակերտ, աղյուսակի 1-ին սյունակում տրված բառերը բացատրի՛ր *Էդվարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»*-ով կամ *Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանով»*, որոնք կգտնես այս հղումով՝ nayiri.com, ամեն բառի բացատրությունը, հոմանիշները գրի՛ր բառի դիմաց՝ 2-րդ սյունակում, իսկ 3-րդ սյունակում պատմվածքից դո՛ւրս գրիր այն նախադասությունը, որում կիրառվել է այդ բառը:

Քեզ օգնելու համար տրված է նմուշ-օրինակ:

Աշխատանքը ներկայացնելու ժամկետը՝

1. ԲԱՌԸ	2. ԲԱՌԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ՀՈՄԱՆԻՇ (ներ) Ը	3. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՏԵՂ ԿԻՐԱՌՎԱԾ Է ԲԱՌԸ
կայծակ	Օդում մթնոլորտային էլեկտրական հոսանքի արագ պարպում. փայլակ, շանթ, հրատ	*Կայծակը* չոր ճայթյունով բախվեց ժայռին…
սրսփել		
քուռակ		
խրխինջ		
ունկնդրել		
խրտնել		
եղյամ		
սրունք		
անցողիկ		
գամփռ		
նիրհել		
ռունգ		
շրշյուն		
խոխոջել		
վրինջ		
զամբիկ		
ճապաղել		
աքացի		
սայթաքել		
անողոք		
հակվել		
անօգ		
ործկալ		

Հավելված 3.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ
ԹԵՄԱՆ՝ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, «ԿԱՆԱՉ ԴԱՇՏԸ» ՊԱՏՄՎԱԾՔԸ

1-ին առաջադրանք. Տեքստային աշխատանք
Սիրելի աշակերտ, ուշադի՛ր կարդա պատմվածքը, ապա լրացրո՛ւ աղյուսակը: Դու պետք է պատմվածքից ընտրես որոշակի հատվածներ և լրացնես համապատասխան սյունակը: Այս առաջադրանքը վերաբերում է պատմվածքի կերպարներին: Հիշեցնեմ, որ այստեղ անշունչ իրերը ևս որոշակի դեր ունեն և կերպարներ են:

Առաջադրանքը ներկայացնելու ժամկետը՝

1. Կայծակի մասին. պատմվածքից գտի՛ր և այս սյունակում զետեղի՛ր կայծակի մասին պատմող հատվածները:	2. Ժայռը. պատմվածքից գտի՛ր և այս սյունակում զետեղի՛ր ժայռի մասին պատմող հատվածները:	3. Կաղնին. պատմվածքից գտի՛ր և այս սյունակում զետեղի՛ր կաղնու մասին պատմող հատվածները:
4. Մասրենու թուփը. պատմվածքից գտի՛ր և այս սյունակում զետեղի՛ր մասրենու թփի նկարագրությունը:	5. Կարմիր ձին. պատմվածքից գտի՛ր և այս սյունակում զետեղի՛ր կարմիր պառավ ձիու նկարագրությունը:	6. Քուռակը. պատմվածքից գտի՛ր և այս սյունակում զետեղի՛ր քուռակի նկարագրությունը:

Հավելված 4.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԹԵՄԱՆ՝ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, «ԿԱՆԱՉ ԴԱՇՏԸ» ՊԱՏՄՎԱԾՔԸ

2-րդ առաջադրանք: Պատմվածքի գործողությունների հաջորդական ընթացքը:

Սիրելի աշակերտ, մեկ անգամ էլ ուշադի՛ր կարդա պատմվածքը և հաջորդաբար նշի՛ր պատմվածքի դեպքերի ընթացքն ըստ հարցերի:

Առաջադրանքը ներկայացնելու ժամկետը՝

1. Ի՞նչ էր անում կարմիր պառավ ձին կայծակի ժամանակ:

---

2. Ի՞նչ էր անում քուռակը կայծակի ժամանակ:

---

3. Ի՞նչը (կամ ո՞վ) առաջինը նկատեց գայլին և ի՞նչ վերաբերմունք ցույց տվեց:

---

4. Ինչո՞ւ ձին չէր կարողանում արածել և ինչո՞ւ էր անհանգիստ:

---

5. Ի՞նչ արեց գայլը, երբ դուրս ցատկեց իր թաքստոցից:

---

6. Ի՞նչ արեց մայր ձին, երբ գայլը բռնեց քուռակի ոտքը:

---

7. Գայլն ի՞նչ էր ուզում անել, ինչպե՞ս էր ուզում հաղթել ձիուն:

---

8. Ի՞նչ էր անում ձին, ինչպե՞ս էր պաշտպանում քուռակին:

---

9. Ո՞վ նկատեց դաշտում կատարվողը:

---

10. Ի՞նչ մտածեց ձին, երբ լսեց շների հաչոցը:

---

11. Ի՞նչ մտածեց գայլը, երբ լսեց շների հաչոցը:

---

12. Ի՞նչ եղավ վերջում:

Աշակերտ----------

Հավելված 5.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ
ԹԵՄԱՆ՝ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, «ԿԱՆԱՉ ԴԱՇՏԸ» ՊԱՏՄՎԱԾՔԸ

3-րդ առաջադրանք: Ի՞նչ գույներ, ի՞նչ բույրեր կային կանաչ դաշտում:

Սիրելի աշակերտ, մեկ անգամ էլ ուշադի՛ր կարդա պատմվածքը և պատմվածքից գտի՛ր *գույն* և *հոտ* նշանակող բառերը և բառակապակցությունները, դո՛ւրս գրիր սյունակներում, իսկ դրանց դիմացի սյունակում էլ նշի՛ր քո կարծիքը, թե ինչ նշանակություն ունեն դրանք պատմվածքում: Օրինակ՝ «կանաչ դաշտ» բառակապակցությունը եթե դուրս ես գրել 1-ին սյունակում, 2-րդ սյունակում էլ գրի՛ր քո կարծիքը, թե ինչո՛ւ է հեղինակը *կանաչ* գույնն ընտրել դաշտը ներկայացնելու համար, ինչ իմաստ ունի կամ դու ինքդ ինչ զգացողություն ունես:

Առաջադրանքը ներկայացնելու ժամկետը՝

1.Գույն ցույց տվող բառեր և բառակապակցություններ	2. Քո բացատրությունը	3. Հոտ ցույց տվող բառեր և բառակապակցություններ	4. Քո բացատրությունը

Աշակերտ ----------

Հավելված 6.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ
ԹԵՄԱՆ՝ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, «ԿԱՆԱՉ ԴԱՇՏԸ» ՊԱՏՄՎԱԾՔԸ

4-րդ առաջադրանք. Պատմվածքի հերոսների մտորումները:

Սիրելի աշակերտ, պատկերացրո՛ւ, որ պատմվածքի կենդանիները կարողանում են մտածել և խոսել: Սյունակներում գրի՛ր, թե ինչ կարող էին մտածել *կարմիր պառավ ձին, քուռակը, գայլը, նրա ձագերը՝ գայլուկները*:

Առաջադրանքը ներկայացնելու ժամկետը՝

1. Ի՞նչ էր մտածում մայր ձին գայլի հետ պայքարելու ընթացքում:	3.Ի՞նչ էր մտածում գայլը մայր ձիու հետ պայքարելու ընթացքում:
2. Ի՞նչ էր մտածում Քուռակը՝ մոր փորի տակ պատսպարված:	4. Ի՞նչ էին մտածում միայնակ մնացած գայլուկներն իրենց որջում:

Աշակերտ ----------